ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3751-Ա « 12 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԹԲԻԼԻՍԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, Երևանի և Թբիլիսիի միջև երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու և «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի Թբիլիսիում կայանալիք համերգին ներկա գտնվելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը գործուղել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի՝ հետևյալ կազմով.

1) 2025 թվականի սեպտեմբերի 22-ից 23-ը ներառյալ՝

Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ
Լենա Մելքոնյան	Երևանի քաղաքապետի տեղակալի օգնական
Լուսինե Ղարիբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետ
Մալվինա Պողոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության սոցիալական մեդիա համակարգող
Դավիթ Գալստյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության լուսանկարիչ

2) 2025 թվականի սեպտեմբերի 21-ից 23-ը ներառյալ՝

Էդգար Չեմբերյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության վարորդ

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Երևանի քաղաքապետի գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի համաձայն:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանի բացակայության ընթացքում արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Դավիթ Գևորգյանին:

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությանը՝ ապահովել 606DF61 մեքենայի տեխնիկական սարքինությունը և լիազորագրի առկայությունը:

6. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ